



ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
• Գաւառաց • 2 1/2 իրա
Վեցամս. • Կ. Պոլսոյ • 5 Մէճ.
• Գաւառաց • 1 1/2 իրա
Օտար երկիրներու • 50 ֆր.
Շանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար զատ ստիարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԱՅՏ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ՕԴՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սնտրաշի կոմսն իւր հրաժարա-
կանին վրայ կը պնդէ, բայց արդեօք
այս զորոյն ստորագրէ, և թէ տակա-
ւին կարելի՞ է առաջն առնուիլ :
Սնտրաշի կոմսը Սլաւեան և զինուո-
րական կուսակցութեանց դէմ կը մա-
քառի, որոյ ազդեցութիւնը չեղո-
քացնելու համար թերեւ հարկ տես-
նուի գտնէ Նովի-Պազարի խնդիրը
լուծել : Վիեննայէն եկած վերջին լու-
մերը կ'ըսեն թէ Աւստրիացիք հոն
մտնելու կը պատրաստուին : Այս գը-
րաւումը ծանրակշիւ է . Նովի-Պա-
զարի մէջ Օսմանեան և Աւստրիական
զորք պիտի դառնան միանգամայն .
Աւստրիացիք քանի մը նշանակեալ
կէտեր պիտի գրաւեն հարկաւ իրենց
հաղորդակցութեան գիծը պահելով :
Սակայն մտնելու չէ որ այս նշան-
դին մէջ Պաշլ-պաշայը չպիտի դըռ-
նուի, և վարչութիւնն Օսմանեան պաշ-
տոնատարաց ձեռք պիտի լինի Արդ-
Ալպանիացիք, որք էլ Նովի-Պազարի
սահմանը կը պահպանեն, կանոնա-
ւոր զօրք պիտի համարուին թէ ան-
կանոն, և արդեօք Աւստրիական զո-
րաց յառաջխաղացումը վանելու փորձ
չպիտի ընեն և կռիւներ չպիտի՞ ծա-
գին : Ալպանիացի շարժումներն այս-
պիսի դիմադրութիւն մը հաւանական
կըցուցնեն : Եթէ կայսերական կառա-
վարութիւնն անոնց եռանդը չմեղ-
մէր : Վասն զի Ալպանիացիք մեծ զո-
րութեամբ սահմանադրութենքը կը
գուժաւորեն, և կ'ենդլաւոր մէջ կըս-
են թէ ուրիշ հաղար Ալպանիացիք
հաւաքուած են Սերվիոյ սահմանա-
գիծին : Ալպանիական ինքիւնը Արե-
ւելեան Եւրոպայի խնդրոյ կարեւոր
մէկ երեւոյթը կը ներկայէ, և լուծ-
ման եղանակը տակաւին անստոյգ է :
Ալպանիացիք կը յայտարարեն թէ դա-
րերէ 'ի վեր Օսմանեան կայսրութեան
հաւատարմաբար ծառայած են և
պիտի ծառայեն, բայց կը խնդրեն
որ իրենց ինքնօրինութեան իրաւունք
չնորհուի, ոչ թէ այն իրաւունքն որ
ապստամբեալ գաւառաց շնորհեցաւ
ընդարձակ կերպիւ, այլ այնպիսի
ինքնօրինութիւն մը, որ առեղանկ ժո-
ղովրդեան իրաւունքը պահպանէ և
երկրին զարգացման համար եկամուտ
ներու մէկ մասը տեղական պիտոյից
յատկանայ : Բ. Դուռը մինչև ցարդ
Ալպանիացիք մեծօրական պատաս-
խան տուած չէ տակաւին, և հաւա-
նական է որ ներկայ դժուարութեանց
լուծուելէն ետև Ալպանիացիք խըն-
դիրներուն մեծ մասն ընդունուի :

Ունիոյ դործերը դժբաղդաբար
տակաւին դոհացուցիչ կերպարանք
մը չառին, և ասոր պատճառը տե-
ղական պաշտօնատարաց աններող և
յետսամիտ ընթացքն համարելի է :
Ունիոյ փորձը նահանգ մ'է քանի մը
հաղար բնակչօք և անբեր հողով : Ինչ
ընին տեղական պաշտօնատարք .
տուրքը սաստիկ ծանրացուցին, այն-
պէս որ բնակչաց և նահանգին կարո-
ղութեան հետ բաղդատամբ խիստ
ծանր էր, մինչդեռ ուրիշ ամեն երկ-
րի մէջ այսպիսի անբեր տեղերու
տուրքը համեմատաբար կը թեթեւ-
ցուի : Ունիւ վերջը Չեքքէզ և ուրիշ
դաղթականներ զրկեցին այն կողմ-
ըն, որ արդէն հին բնակչաց համար
նեղ էին, առանց յիշելու թէ այդ
դաղթականներն Եւրոպական թուր-
քիոյ մէջ իրենց ընթացիկ Եւրոպայի
նողկանաց և տեղութեան ալ սարսա-
փելի վնասուց պատճառ տուած էին :
Գաղթականաց առաջին գործն եղաւ
Քրիստոնէից վրայ վրէժխնդրութիւն
և հարստահարութիւն 'ի գործ դը-
նել . և երբ այս վրէժխնդրութիւնը
զիրենք պաշտպանեցին, ապստամբ
համարուեցան : Խաղոյն զօրք զրկուե-
ցաւ անոնց վրայ և տեսնուեցաւ բար-
ձր պաշտօնատար մը, որ չամչեաւ
«Յաղթող Ունիոյ» տիրապետ առնուիլ,
կըր թէ քանի մը հարիւր խեղճ դիւ-
ղացիներ հարուածել ու բանտարկե-
լը մեծ քաջադուրծութիւն մ'էր : Վե-
հանձնական ներողութիւն մ'է գոր-
ծոց առաջին վիճակին վերադարձը
կրնար ամեն բան վերջացնել, բայց
կրնաի որ տեղական պաշտօնատարք
հաճոյք մը կ'ըզան կամ գործ մը ցուց-
նել կուզեն տեղութեան 'ի իրենց հայ-
րենակիցները հալածելով :

Այս պարագայից մէջ Գոմիսէր
Վսեմ. Նուրեան էֆէնտի հրաժարա-
կան տուած է եղեր, և արդարեւ թէ
պէտք ըլլա՞մ, բայց ասկէ աւելի
պատուաւոր ընթացք մը չէր կրնար
բռնել : Կամ՝ տեղական պաշտօնա-
տարաց քմահաճ ընթացքը վաւերա-
ցնելու, կամ՝ արդարութիւնը պաշտ-
պանելու հարկին ընտրութեան մէջ
խլճի և պատուոյ տէր մարդ մը չէր
կրնար վարանիլ այս վերջին ընտրե-
լու : Իւր յաջորդն՝ արդեօք պիտի
յաջողի՞, խիստ անստոյգ և տարա-
կուսելի է այս, քանի որ տեղական
պաշտօնատարք, վտիւանակ խոստաց-
եալ ներողութեան, մահուան և աք-
սորի դատաւիճիւններ կարծակեն : Բայց
մեք տարակոյտ չունինք որ Օդոստ-
վեհագետին անսպառ զթուլութիւնն
ու արդարութիւնն, ինչպէս նաեւ իւր
հաւատարմի՝ հպատակաց բարօրու-
թեան համար աշխարհածանթ խը-
նամքն ու փափաքը կրնան վեհանձ-
նական ներողութեամբ խնդիրը լու-

ծել, և անշուշտ նորին կայսերական
վեհափառութեան ուղղեալ պատշա-
ճաւոր ազերս մ'ի դերեւ չեղներ :

Արեւելեան Բուլղարի ընդհանուր
կառավարիչ Ալէքս փաշային ընթա-
ցից վրայ հետաքրքրական լուրեր կու-
գան փոխադէն : Տեղւոյն Եւրոպական
յանձնախումբն Ալէքս փաշային կա-
ռավարական ընթացքն անկողմնակալ
քննութեան մ'ենթարկել հարկ տես-
նելով, յաջորդաբար երեք նստի մէջ
այս դործը կատարեց : Իրաց վի-
ճակն արդէն խիստ հարկաւոր ըրած
էին այդպիսի քննութիւն մը : Յանձ-
նախումբն իւր խորհրդակցութեանց ար-
դիւնքն երեք յայտարարութեանց
մէջ ամփոփեց, որոց մին վեհապետ
կըսէ թէ այդ ինքնօրէն նահանգին
վարչութեան գլուխն՝ այն է Ալէքս
փաշան՝ կաղմական կանոնադրին ՅԱՐԳ-
յօդուածին հակառակ ընթացք բռն-
նած է՝ մինչև ցարդ կատարուած
անուանմանց մէջ :

Յիշեալ յօդուածն յատկապէս
կարգելու ժողովրդեան մէկ մասնաւոր
տարրը նպատաւորել 'ի վնաս այլոց՝
երբ ինքիւն հասարակային պաշտօնա-
տարաց անուանման վրայ լինի : Այսու-
ամենայնիւ Ալէքս փաշան ընդհանուր
կերպիւ և վարչութեան ամեն ճիւ-
ղերուն մէջ Պաշլաբայ նախապատ-
ուութիւն տուած է :

Երկրորդ յայտարարութիւնը վի-
թայի փաշային դէմ՝ 36 երեւելաց
կողմանէ մատուցեալ բողոքագրոյն կը
վերաբերի : Յանձնախումբը բացա-
տրեց թէ կաղմական կանոնադրի-
ւր զինուորական հրամանատարաց
վրայ իշխու իրաւունքը Սուլթանին
վերապահած լինելով, նոյն արամա-
դըրութեան ուղեղն համեմատ ընդ-
հանուր կառավարիչը ձեռնհասու-
թիւն չունի բողոքներ և քանդատ-
ներ ընդունիլ նահանգին զինուորա-
կան ամենաբարձր գլուխին դէմ : Մի-
անգամայն յանձնախումբը մէկ կողմ
թողուց այն կէտը թէ յիշեալ բողոքա-
գիրը բողոքովն անվայել լեղուով խրմ-
բաղբուած լինելով, ընդհանուր կա-
ռավարին արդեօք պատշաճաւոր
գործ մ'ըրած կը լինէ՞ր զայն ըն-
դունելով :

Երրորդ յայտարարութիւնն Արե-
ւելեան Բուլղարի վերառուցաց խոր-
հրդին շատ մը պաշտօնական դար-
ձոյ նկատմամբ յանձնախումբն կար-
ծեաց մէկ արտայայտութիւնը պէտք
է նկատուի, որովհետեւ վերառուցաց
խորհուրդը կաղմական կանոնադրին
որամադրութեանց մէկ կարեւոր մա-
սը յարգելու շատ տրամադիր չըլ-
լիր : Նաեւ այն խնդիրը թէ Սուլթա-
նին հաստատութեան հրովարտակն
որ «Ալէքս փաշա» անունը կը կրէ,
միթէ կրնա՞յ այնքան անտես լինիլ
ընդհանուր կառավարչէն, որ միշտ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց հանրու
ծախքը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խմբագրի-
—Տնօրէնին ակտի ուղղուի : Գրաւ-
թիւս Ստորագրեալ Հաստատութիւն
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :

Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի :

Զտրուած նամակ, յող ու տծ, եւ
կամ ինչ արդար :

«Վօհօրիտի» կ'ստորագրէ : Այս վշուտ
խնդիրն ալ յաղուեցաւ Եւրոպական
յանձնախումբին մէջ, որ տեսաւ թէ
այս խնդիրը, թէ և առ երեւոյթս պար-
զապէս ձեւական խնդիր մ'է, այսու-
ամենայնիւ բաւական նշանակութիւն
ունի, որովհետեւ աղով դոհացում
կը տրուի ինչ ինչ բաղձանաց, որը Ա-
րեւելեան Բուլղարի ժողովրդոց մէկ
մասին վրայ կը նշմարուի, և որ նա-
հանգին ներկայ կացութեան ամրա-
պնդմանը չեն կրնար նպաստել : Սա-
կայն յանձնախումբն այս խնդրոյն
նկատմամբ տակաւին վերջնական ո-
րոշում մը չէ ըրած :

Անդրական պատու իրաւն Արեւել-
եան Բուլղարի երեսփոխանական Ժո-
ղովին յառաջիկայ ընտրութեանց նը-
կատմամբ կարեւորական կանոնադրին
370րդ յօդուածին համեմատ առա-
ջարկութիւն մը ներկայած էր, որ մի-
աձայնութեամբ ընդունուեցաւ : Յիշ-
եալ առաջարկութիւնը կը խնդրէ որ
նահանգին կառավարութիւնը կարե-
լի եղածին չափ չուտով Արեւելեան
Բուլղարի բնակչաց թուահամարը կա-
տարէ : Կը մնայ այժմ գիտնալ թէ Եւ-
րոպական յանձնախումբն այս կարեւոր
ցոյցն Ալէքս փաշային հետեւած ըն-
թացից վրայ ազդեցութիւն պիտի
կրնա՞ն ունենալ յանձնախումբին Ռու-
սական անգամն իւր պաշտօնակցոց
տուած որոշումներէն աշխարհ չէ տ-
խորժած, որ զանոնք ստորագրելէ
ետ կեցած է :

Երկու երեք օրէ 'ի վեր եկած հե-
ռագրերը նոր շփոթութեան մը հա-
ւանականութիւնը կը ծանուցանեն :
Հապէշաստանի և Եդիպտոսի պատե-
րաղմն, որ քանի մը տարի առաջ բա-
ւական ուշադրութիւն գրաւած էր,
վերանորոգիլ կ'սպառնայ : Հապէ-
շաստան վերստին սպառնական դիրք
մը կը բռնէ Եդիպտոսի դէմ, և հե-
ռագրերը կը ծանուցանեն թէ Սեդ-
ղիացի Կորսան դեպաշեան, որ Ե-
դիպտոսի ծառայութեան մէջ կը դըռ-
նուի Երբեք քաղաքային և զինուորա-
կան պաշտօնատար միանգամայն, Ե-
դիպտական կառավարութեան կող-
ման, Հապէշաստանի սահմանադրու-
թը զրկուած է պէտք եղած զինուո-
րական միջոցները ձեռք առնելու :
Փարիզի կոյտը լրագրին մէջ հրատա-
րակեալ հետեւեալ հեռագիրն ինչ
ինչ մանրամասնութիւններ կուտայ
այս դործին նկատմամբ :

«Աղէքսանդրիա 15 օգոստոս»
«Հապէշաստանի թագաւորն Ե-
դիպտոսի հետ խաղաղութիւն չէ կըն-
քած՝ ինչպէս կը կարծուէր : Վերին
Եդիպտոսի Մատան քաղաքէն եկած
ուղերները կը ծանուցանեն արդա-
րե թէ Հապէշաստանի Յովհաննէս
թագաւորն իւր դրամավարաց երկու-
քն, այն է Բուս—Սիւլա և Բուս—

• Խուսարեան կարապետ է Գիշտի :

վճարում—Միջոցներ զորավարներն 1300 զորքով ճանաչել համար է հրամանը և ներքին որ վերին եղբայրության Մասնաքաղաքին շրջակայքները Արքիքո, Ա. լեյթ, Աստու և Մ. քաղաքը գաւառները զորաւեւն, և կարելի եղածին չափ յառաջանան երկրին մէջ:

«Մասնաքաղաքի և Գեղեքնի եղբայրության պահապան զորքն, որք առաջին կռիւր պիտի ընեն թշնամիդն հետ, 2000ական հոգիէ կը բաղկանան»:

«Խաղիկն հրամանաց համեմատ կորսուն դիպարեալ Միջին եղբայրության խորթում քաղաքէն մեկնած է իւր հետ ունենալով 3000 զորք և 12 թնդանօթ և Հապէշներու բանակին գէտ հընելու համար փութով դէպ ի հարաւ պիտի քալէ»:

«Յովհաննէս թագաւորը Շօայի թագաւորութեան վերջերս Ասոս վերադարձաւ, որ իւր սովորական բնակավայրն է»:

«Վերին եղբայրության մէջ մեծ երկիւղ կայ: Ժողովուրդը դէպ ի հիւսիս կը փախչի»:

ՀԱՌԱՊԱՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտրա 28 օգոստ.
Սոնա—Արցախի Աստրո-Քուրբակիան յանձնարարեալ Նովի-Պաղարի գաւառին մէջ Աստրո-Քուրբակիան զորաց զորաւորէր կէտերուն նկատմամբ համաձայնեցաւ, և Աստրո-Քուրբակիան կառավարութիւնը որոշած որոշումը վերադարձուց և որոշեց իւր կողմէն թէ զորքերն սեպտեմբեր ամսոյն առաջին օրերը Նովի-Պաղարի գաւառը պիտի մտնեն և անոնց թիւը հինգ հազարէ աւելի չպիտի լինի:

Յանձնարարին որոշած կէտերն են, Փրիսայ, Փրէփոլ և Քալաթա:

Պ. Ֆրանչէսքի Փրիսայի Աստրո-Քուրբակիան ընդհանուր հիւստիստոս անւանեցաւ:

Մեմբիս 27 օգոստ.
(Միացեալ-Նահանգք)

Դեյքին տեղը կը նուազի:

Սօփիա 27 օգոստ.
Արեւելեան Բուլղարի կառավարութիւնը և Նուրուզի լեռանց մէջ անուանի Արեւիկ և Շապարի ուղիքը բռնեց և Նուրուզի լեռանց վրայ լեռանց մէջէն 240 խորամ երևան հանուեցան, որք Բամա-դանի վերջն սպաստարութիւն մը պատրաստեալ պաշտօնն ունէին:

Լոնտրա 28 օգոստ.
Այս առաւօտեան լրացիր Վիլնիւս-յէն եկած հետապիւր մը կը հրատարակեն, որ Վալմիյի մէջ Պիլմարք իշխանին և Անտրաշի կոմսին միջև տեղի ունեցած տեսակցութիւնը կը ծանուցանէ:

Այս երկու պետական անձանց խօսակցութեանց վրայ դրական բան մը հիմարեցաւ. միայն սա յայտնի է որ Պիլմարք իշխանին ի մօտայ Վիլնիւս երբ

թաղով փոխադարձ այցելութիւն պիտի տայ Անտրաշի կոմսին:

Անգղիական լրագրիչը հետզհետէ և զած սոյն տեսակցութիւններն Աստրո-Քուրբակիան միջև մտաւորութեան դաշնակցութեան մ'իրրեւ նշան կը նկատեն:

Լոնտրա 28 օգոստ.
Հելլենական խնդրոյն ընթացից վրայ Լոնտրայի լրագրաց տուած տեղեկութեանց մէջ սա խօսքն ալ կայ թէ բոլոր տէրութիւնը որոշմանը են այս խնդրոյն մէջ Գաղղիոյ և Անգլիոյ հետեւիլ, որք սակայն կատարելուպէս չեն համաձայնած եղեր:

Միւս կողմէն կը հաւատան թէ քաղաքական ակնարկ մէջ հաւանական կը համարուի որ Օսմանեան և Հելլենական Քովիսթներուն միջև համաձայնութիւն մը գոյանայ բոլոր կէտերու վրայ ի բաց առեալ Նանեան, խնդիր մը, որուն լուծումը սահմանադրական միջազգային յանձնարարին մը պիտի վերապահուի, որ նիւթական տեսակցութիւն իւր որոշումը պիտի տայ:

Այս առաւօտ հետեւիլ է:

Փարիզ 28 օգոստ.
Ճարտիկ Երօզյան քաղաքէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ յիշեալ քաղաքին մէջ ըլլէր ծագած է և տարածուի կ'ապաւնայ:

Վիեննա 28 օգոստ.
Կալմիյի մէջ Պիլմարք իշխանին և Անտրաշի կոմսին տեսակցութիւնն հինգ ժամ տեւեց:

Կը հաստատուի թէ Պ. տը Հայմէրէ Անտրաշի կոմսին պիտի յաջորդէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բ. Դուռը տակաւին ինչ ինչ խորհրդակցութեամբ զբաղեալ լինելով, երէկ թուրք-Հելլենական յանձնարարեցաւ:

Երէկ զրոյց եղաւ թէ Աստրիական զորքը Նովի-Պաղար մտեր է:

Վաղըթ այս լուրը կանխահա կը համարուի, և կըսէ թէ Աստրիացիք տակաւին ղենուորական քննութիւններ կընեն յիշեալ գաւառին մէջ:

Անգլիայի Պէյքըր վաշան, որ երկու ամիսէ ի վեր Անգլիա կը գտնուի, ստացած հրաժեշտին պայմանաւոր լրացած լինելով Բ. Դուռէն մէկ ամիսուան համար նոր հրաժեշտ խնդրեց, և երէկ Բ. Դուռն հեռագրաւ ծանոյց իրեն թէ իւր խնդիրն ընդունուած է:

Հետեւեալ, Տէրմիշ վաշային տեղ Պէյքըր վաշային անուանելուն լուրը կանխահա է:

Մէքքէ զրկուած նուէրներուն կարաւանը (Սիւրբ) երէկ իւսկիւն

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅ ՀԱՅԵՐԷՆԻ ԱՊՍԴՍՑ ՎԻՃԱԿԸ

Ի պատասխանի Նոր Կեանքին, զրեց Ստեփան Ե. Պոնտացին. — Կոստանդնուս քաղաքի տպագրութիւն Սրամեան, 1879. Երեսը 28 վերջաւանածալ:

Հեղինակը շատ հանդարտութեամբ և շատ խոհմութեամբ խրատներ կ'ուղղէ առ իւր սիրելի բարեկամ Պ. Ե. Տէմիրճիպաշեան, որ ուղղախօսութեան գրութեան ետեւէն չմտնի, և ճանչնալով և յայտնելով իսկ ինչ որ «Չերազեան խմբակ» կուսած երիտասարդաց արդիւնքն է, կը յորդորէ որ Հայուն գեղեցիկ լեզուն տղեղ և անհամ լեզուի մը չդարձնեն, և զորոց լեզուին հետեւորութեամբ ստացուած հարստութիւններէն և զարդերէն չմերկացնեն: Պ. Պոնտացին մասնաւոր զննութեանց ալ կ'իշխայ, և այսու կարողացաւ թէ ինքն ալ քերականական և լեզւաբանական մակածութեանց տեղեակ անձ մ'է: Իւր տեսութիւնք բաւական յարդիւն և և երբ լեզուի

խնդիրն օրինաւոր քննութեան ենթարկուի, այնպէս կը կարծեմ թէ Պ. Պոնտացին համառօտ էջերն ալ ինկատ առնուելու արժաւորութիւնը լիովին ունին:

ՄԻ ԿԱԹՈՒԼԱՐՍՈՒՐ

Ձոր կը հեղու Սիսակ Հայ միսիոնին վերայ. — Կոստանդնուպոլիս տպագրութիւն Ա. Մ. Աշեան և Ընկեր. 1879. — Երեսը 34 վերջաւանածալ:

Ահա ուրիշ հետեւող մըն ալ այն գրութեան զոր Պ. Ե. Տէմիրճիպաշեան կը պաշտպանէ: Լեզուին նկատմամբ վերը գործողութիւնը կը պարզեցնէ:

Իսկ պարունակութեանը վրայ երկար զրուցելու նիւթ մը չկայ:

Պ. Սիսակ գեղեցիկ և հայրենասէր զգացողներ կ'արտայայտէ Հայ ներկայ միճակին վրայ խառնելով իսկ մերթ ընդ մերթ քաղաքագիտական գործող խորշերը, որպէս զի անտի Հայիական խնդրոյն ի ներպատ հետեւութիւններ կարենայ քաղել: Իւր խօսքն ընդհանրապէս երիտասարդական աշխուժիչ ներշնչող է:

տարէն մեկնեցաւ Միջերկրականի ճանքով Դամասկոս երթալու համար:

Օսմանեան կառավարութեան հաշտն համար երէկ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն Անգլիական շրջանաւ մը գէնք և ազգամիջերք բերաւ մայրաքաղաքս:

Պաղատալի նահանգէն դուրս տրմըտիք հանուիլն արգիւտեցաւ մինչև ի նոր տնօրէնութիւն:

Այս գիշեր ոստիկանութիւնն Ագ-Սէրայի կողմը խաղաղուած մը կ'սկսէ լով քանի մը խաղաղ թուրք զաղութականներ ձերբակալեց:

Եանի անուն Ատաբաղաբի 50 տարեկան Յոյն մը, որ տասն տարիէ ի վեր կաշկալարութիւն կընէր Ղալաթիոյ մէջ, երկուշաբթի օրը Ղալաթիոյ դատարանն իրթալով յայտարարեց թէ մահմետական կրօնքը կընդունի:

Ասոր վրայ Շէյխ—Իւլ—Խալմի գուռը տարուելով Եանի մահմետական կրօնքն ընդունելու համար սովորական եղած դաւանութիւնն ըրաւ, բայց ըսին իրեն թէ պաշտօնական գործողութեանց ամենալ կատարած լինելու համար հետեւեալ օրն աղերսագիր մը պէտք է մատուցանէ առ Բ. Դուռն: Կրօնափոխն հաւանեցաւ այս առաջարկութեան, և ըստ որում ժամանակն անցած էր և ինք կը յայտարարէր թէ յատուկ բնակարան չունէր, զինք այն դիշերւան համար Շէյխ—Իւլ—Խալմի պաշտօնատան մէջ հիւրընկալեցին, և գաւառներուն անեակը դրին:

Առաւօտեան դէմ, երբսը մինակ կը գտնուէր, կաշկալարն եղաւ, գաղտնապէս Սթամբուլ Դատարանին յարկը մտաւ, առանց աղմկի պատուհան մը բացաւ, և ինքզինք վար նետեց, որով երկու թեւերը ջախջախեցան, մարմինը քանի մը տեղերէն վերադարձեցաւ, և քիչ մ'ետքը մեռաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Այս առաւօտ բացուեցաւ	12.24
Կէս օրին	42.24
Բուռնի երկաթուղի	Փր. 44.50
Թղթագրամ	Ժր. 730
ԸՆԹԱՑԻ ԳՐԱՄՈՑ	
17 Օգոստոս	
Անգլ. լր.	109.47

չեալ է և բանաստեղծական գրութեան մը ձեւը կ'ըզենու: Եթէ լեզուն արտին թարգմանն է, ապա և ուսնդուն և ազգասէր սիրտ մը ունի Պ. Սիսակ, և իւր գործն ըստ այսմ պէտք է որ գրութեամբ յիշատակուի: Միայն թէ ինքն ալ կը կրէ իւր հասակին հարկերը, և կը խնդրէր որ իւրոցն անձին ինչ որ ուրիշ առթիւ գրեցի Պ. Հրանտ Ասատուրի և իւր «Պատմական ներշնչութեան» նըկատմամբ Պ. Սիսակայ դրածներն ալ քանի մը պատմական ներշնչումներ են:

Ի ՀԱՆԴԻՍ

49 Դ. ՏԱՐԵՂԱՐԸԻ

Ազգային Հիւանդանոցի Ս. Փրիզի Ի դեմաց Հոգաբարձութեան խօսեցաւ Յ. Ոսկան. — Կոստանդնուպոլիս տպագրութիւն Յովսէփայ Դավաթեան, 1879. — Երեսը 15 փոքր ութնածալ:

Տօնախմբութեան մը առթիւ զուրջուած քանի մը խօսքեր են, բայց և այս քանի մը էջը բաւական են ճանչցնել մեզ արդիւնաւոր Յ. Ոսկան Հիւանդան, միշտ երիտասարդ և միշտ

Նարոյնի տիկ	87.46
Խիւսիսի Ուսու	90
Գրքակց	54.20
Մէհմեթի տարբերութիւն	6.25
Հինգնոց	18
Մէհմեթ	17
Պրիզի	480

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն.

Ազգ. վարչութեան Գաղաքական Ժողովն երէկ Ս. Պատրիարքին նախագահութեամբ Պատրիարքարան գումարուելով ետ մնացած խնդրոց կարգադրութեամբ զբաղեցաւ:

Ս. Պատրիարքը վսեմ. Սէրմիշէն էֆէնտիի հետ անցեալ օր նախարարաց խորհրդոյ նախագահ Բարձր-Արեֆի փաշային տեսակցութեան գընացած միջոցին Հայաստանի մէջ բարենորոգմանց գործադրութեան, Ուլունիցի թշուառ բանտարկեղցը ընդհանուր ներդուլութիւն շնորհուելու և գտակի պատճառաւ բանտարկեղց և Մշեցի Յակոբ սարկաւազին ազատութեան վրայ Ն. Բարձրութեան խորին ուշադրութիւնն հրաւիրեց:

Արեֆի փաշան բարենորոգմանց անմիջապէս գործադրութեան մասին ապահովիլ խոստումներ տալէ զատ Ուլունիցի բանտարկեղցը ընդհանուր ներդուլութիւն շնորհուելու խոստում ըրաւ, և գտակի պատճառաւ բանտարկեղց 3-6 ազգայնոց ինչպէս նաեւ Մշեցի Յակոբ սարկաւազին ազատութեան համար վերատին հրաման ղրկեց ոստիկանութեան նախարարին: Ոստիկանութեան նախարարը պատասխանէր է թէ ինքիւր պատժական ատենին յանձնուած լինելով, դատական նախարարին կը պատկանի ուստի և իր ձեռնհասութեան վերէ բանտարկեալներն արձակել:

Ս. Պատրիարքը լսելով զայս՝ երէկ գաւառական գործոց նախարար վսեմ. Սալիտ փաշային յատուկ թագրեր մը ղրկեց, բայց Ն. վսեմութիւնը մեկնած լինելուն այս առուր մնաց:

Ս. Պատրիարքը Տիգրանակերտի Քովիսթը վսեմ. Ապետին փաշային և Ա. Մանաս էֆէնտիին, ինչպէս նաեւ Կարնոյ վանայ և Մշոյ Քովիսթը վսեմ. Եուսուֆ փաշային և Ս. Աղաբէկեան էֆէնտիին յատուկ գիրքերով, գործուած հարստահարութեանց վրայ անոնց խորին ուշադրութիւնը հրաւիրեց:

աշխոյժ, ազգասէր և աշխատասէր Պ. Յ. Ոսկան շատ կարեւոր տեղեկութիւններ խառնած է իւր խօսքի մէջ, և ուղած է ևս յարմար առաջարկութիւններ յաւելուլ յառաւել բարդաւանան այդ ազգային հաստատութեան: Չեմ գիտեր թէ այն առաջարկութիւնք ինկատ առնուեցա՞ն յորոց անին է. այլ բաղձալի էր որ Հոգաբարձութիւնն որ իւր անուն այն խօսքերը զրուցել տուաւ և հրատարակեց, միայն տեղին համեմատ գրուցուած խօսքի մը պէս չնկատէ զայն, և գործադրութեան փոյթ տանի:

Ամենայն ոք գիտէ թէ ինչ ոճով սովոր է գրել Յ. Ոսկան էֆէնտին, և իւր ոճին հաւնած անձինք ալ բազմաթիւ են, ուստի այս կէտին վրայ աւելի երկարել տեսնուի:

ԽՕՄԻ ԶՀԱՅԵՐԷՆԸ

(Գրեց) Վահան վարդապետ Պարոնգակցի. — Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ս. Դ. Պարոնգակցեան և Ընկեր. 1879. Երեսը 65 վերջաւանածալ:

Արժ. Տէր Միստան վահան

J. m f	J. m f	J. m f	J. m f
11 30	5 25	11 30	5 25
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5